



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՆՐԱՄԱՆ № 38

«01» 09 2021թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԵՎ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշմամբ հաստատվել է մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը: Գործողությունների ծրագրի 4-րդ կետով նախատեսվում է սահմանել զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության վերաբերյալ իրազեկման չափորոշիչներ: Վերոհիշյալ չափորոշիչների մշակման նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքներով պարզվել է.

Հայաստանի Հանրապետության սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 24-րդ հոդվածը սահմանում է.

«Հոդված 24. Կյանքի իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:
2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:
3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 2-րդ հոդվածը սահմանում է.

« Հոդված 2. Կյանքի իրավունք

1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:

Ոչ մեկին չի կարելի դիտարկել որպես զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:

2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ. օրինական ձեռքակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կայանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ. խոտվությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Ապրելու իրավունքը յուրաքանչյուր մարդու անկապրելի իրավունքն է: Այդ իրավունքը պահպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի քմահաճ ձևով զրկել կյանքից:»:

Կյանքի իրավունքը՝ որպես գերագույն իրավունք, մարդու իրավունքների համակարգում ունի առաջնային բնույթ՝ Նշված հանգամանքով պայմանավորված՝ այն իր ամրագրումն է ստացել բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթերում, իսկ վերջինիս բովանդակությունը բացահայտված է միջազգային և ներպետական դատական ատյանների բազմաթիվ նախադեպային իրավական դիրքորոշումներով, որոնք ուղղված են անձի կյանքի իրավունքի արդյունավետ երաշխավորմանը:

Կոնվենցիան անձի նյութական իրավունքների շարքում առաջին հերթին հռչակում է կյանքի իրավունքը: Կյանքի իրավունքի հիմնարար բնույթը բխում է նաև նրանից, որ պետությունն իրավասու չէ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի կարգով շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի դեպքերի: Վերոգրյալից հետևում է Մարդու իրավունքների ՄԻԵԴԻ (այսուհետ՝ ՄԻԵԴ) այն մոտեցումը, որ կյանքից զրկելու յուրաքանչյուր դեպք անհրաժեշտ է դարձնել մանրամասն քննության առարկա (*Gül v. Turkey* գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, պարբ. 78):

ՄԻԵԴ-ը, ի թիվս այլոց, Կոնվենցիայի 2-րդ հոդվածի կիրառությանը վերաբերող հազարից ավելի որոշումներում ընդգծել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ միասին, Կոնվենցիայի 2-րդ հոդվածը ամրագրում է Եվրոպայի խորհրդի անդամ ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնական արժեքներից մեկը (*McCann and Others v. The United Kingdom* գործով 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18984/91, պարբ. 147):

¹ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն. մարդու իրավունքների ՄԻԵԴի նախադեպային իրավունքը/ Վ.Հ. Հովհաննիսյան, Ջ.Գ. Ղուկասյան, Լ.Օ. Հակոբյան, Լ.Ս. Հակոբյան.-Եր.: Տիգրան Մեծ, 2005, էջ 9:

ՄԻԵԴ-ը Կոնվենցիայի 2-րդ հոդվածը մեկնաբանել է որպես այդ դրույթի նյութաիրավական կողմերի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմ՝ հաշվի առնելով այդ իրավունքի հիմնարար բնույթը:

Այսպես, Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետը պետություններին պարտավորեցնում է ոչ միայն ձեռնպահ մնալ անձանց կյանքի նկատմամբ դիտավորյալ, անօրինական ոտնձգություններից, այլ նաև սահմանում է, որ պետությունները պետք է իրենց իրավագործության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար համապատասխան քայլեր ձեռնարկեն (*Osman v. the United Kingdom* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 87/1997/871/1083, պարբ. 115): Կյանքի իրավունքի պատշապանությունն անուղղակիորեն պետությունից պահանջում է անձանց մահվան կապակցությամբ **պաշտոնապես օբյեկտիվ քննություն իրականացնել**: Նման քննություն իրականացնելու պարտականությունը ծագում է սպանության կամ կասկած հարուցող մահվան բոլոր դեպքերում՝ անկախ նրանից, թե հանցանք կատարած անձինք անհատներ են, թե՛ պետական մարմիններ կամ անհայտ անձինք (*Nachova and Others v. Bulgaria* գործով 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռը, գանգատներ թիվ 43577/98, 43579/98, պարբ. 110):

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջն է ապահովել անկախ և անաչառ պաշտոնական քննություն, որը բավարարում է **արդյունավետության որոշակի նվազագույն չափանիշների**: Իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ և պարտավոր են նախաձեռնել քննություն, որն ի վիճակի է նախ՝ որոշակիացնել այն հանգամանքները, որոնցում դեպքը տեղի է ունեցել և կարգավորող համակարգի գործունեության ցանկացած թերություն, երկրորդ՝ բացահայտել դրանում ներգրավված պետական պաշտոնյաներին և մարմիններին: Հասարակական հսկողության պահանջը այս համատեքստում նույնպես կարևոր է (*Kats and Others v. Ukraine* գործով 2008 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ, գանգատ թիվ 29971/04, կետ 116):

Քննությունն **արդյունավետ** կարող է համարվել այն դեպքում, երբ հնարավոր կլինի քննությամբ ձեռք բերված փաստերը համադրել և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկել: Իշխանությունները տեղի ունեցած իրադարձությունը բացահայտելու համար պետք է ձեռնարկեն **հասանելի, խելամիտ** քայլեր՝ վկաների հարցաքննություն, դատաբժշկական փորձաքննության նշանակում, ինչպես նաև դիախերձում, ինչը թույլ կտա բացահայտել առկա վնասվածքների ամբողջական և իրական պատկերը, ինչպես նաև մահվան պատճառը (*Tanrikulu v. Turkey* գործով 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 23763/94, պարբ. 109 և *Gül v. Turkey* գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, պարբ. 89): Քննության եզրակացությունը պետք է **հիմնված լինի գործով առկա փաստերի ամբողջական, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության վրա**:

Այլ խոսքով, քննությունը պետք է լինի մանրամասն: Դա նշանակում է, որ մարմինները միշտ պետք է կատարեն լուրջ քայլեր, որպեսզի պարզեն՝ ինչ է տեղի ունեցել, և չպետք է հիմնվեն **չտապողական կամ թույլ պատճառաբանված հետևությունների վրա**, որպեսզի փակեն իրենց քննությունը կամ որպես իրենց որոշումների հիմք ընդունեն: Նրանք պետք է կատարեն իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլոց, ականատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները: Քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում պատճառված վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու վարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը (*Mikheyev v. Russia*, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռ, գանգատ թիվ 77617/01, պարբ. 107, *Ramsahai and Others v. the Netherlands* գործով 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 52391/99, պարբ. 321, *Esat Bayram v. Turkey* գործով 2009 թվականի մայիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 75535/01, պարբ. 47):

ՄԻԵԴ-ն իր որոշումներում բազմիցս ընդգծել է նաև, որ քննության արդյունավետությունը գնահատելիս կարևոր է հատկապես այն հանգամանքը, թե որքան արագ են իշխանություններն արձագանքում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքներին, ինչը նպաստում է հանրության վստահության պահպանմանը՝ օրինականության ամրապնդման և անօրինական գործողությունների նկատմամբ հանդուրժողականության բացառման հարցում (*Hugh Jordan v. United Kingdom* գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, պարբ. 108, *Yaşa v. Turkey* գործով 1998 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռը, գեկույցներ 1998-IV, էջեր 2439-2440, պարբ. 102-104):

ՄԻԵԴի նախադեպային իրավունքում ձևավորված՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության մյուս չափանիշը այն իրականացնող **պատասխանատու մարմինների օրենքով և գործնականում անկողմնակալ և անկախ լինելն** է: Սա նշանակում է, որ ոչ միայն ենթակարգային կապի, այլ պրակտիկ գործունեության մեջ այս մարմինները պետք է անկախ լինեն: Անհրաժեշտ է նաև հասարակության անդամներին ինչպես քննության, այնպես էլ դրա արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկություններով ապահովել, հասարակության անդամների մոտ վստահություն առաջացնել օրենքի գերակայության նկատմամբ, ինչպես նաև բացառել հանցավոր համագործակցությունը կամ հանցավոր արարքների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելը: Բոլոր դեպքերում տուժողները պետք է ներառվեն քննության մեջ՝ վերջիններիս օրինական շահերն ապահովելու նպատակով (*Güleç v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 54/1997/838/1044, պարբ. 82):

Կյանքի իրավունքին առնչվող՝ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի կիրառումը Հայաստանի Հանրապետության դեմ բերված գանգատներով

ՄԻԵԴ-ը կյանքի իրավունքի ենթադրյալ խախտումների կապակցությամբ արդյունավետ քննության եվրոպական չափանիշները վերահաստատել է Հայաստանի Հանրապետության դեմ բերված գանգատների կապակցությամբ կայացված հետևյալ վճիռներով.

Մուրադյանն ընդդեմ Հայաստանի (գանգադ թիվ 11275/07, 24 նոյեմբեր 2016թ.)

ՄԻԵԴ-ը նշել է, որ նախաքննական մարմինը ի սկզբանե տեղեկություններ է ձեռք բերել զորամասի 3 սպաների կողմից Սուրեն Մուրադյանի նկատմամբ հանցավոր արարքներ թույլ տալու՝ նրա նկատմամբ բռնություն և սպառնալիքներ գործադրելու վերաբերյալ, միջոցներ չի ձեռնարկել նրանց անմիջապես մեկուսացնելու ուղղությամբ և նրանց հարցաքննել է համապատասխանաբար երկու, երեք և տասն օր անց: Այս կապակցությամբ ՄԻԵԴ-ը նշել է, որ թեև չկան նշված սպաների կողմից նախնական համաձայնությամբ գործելու հանգամանքի վերաբերյալ ապացույցներ, այնուամենայնիվ, այդպիսի համաձայնության վտանգի հավանականությունը նվազեցնելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվել, ինչը լուրջ թերություն է:

- Նախաքննական մարմինն իր ուշադրությունը սևեռել է Սուրեն Մուրադյանի մահվան պատճառ հանդիսացած վնասվածքի պատճառման հնարավոր դեպքերից միայն մեկ՝ 2002թ. հուլիսի 21-ին տեղի ունեցած միջադեպի վրա՝ առանց լուրջ քայլեր ձեռնարկելու մյուս դեպքերի հանգամանքները պարզելու ուղղությամբ, այդ կապակցությամբ վկաներին մանրամասն հարցեր չեն առաջադրվել:

- Նախաքննության ընթացքում հարցաքննվել են դեպքերին առնչություն ունեցող Սուրեն Մուրադյանի երկու համաձայնակիցները, ովքեր հերքել են զորամասի շտաբում Սուրեն Մուրադյանի նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորելու հանգամանքը, սակայն բացառված չէ, որ նրան իրենց հայտնի տեղեկությունները չեն հայտնել՝ հաշվի առնելով, որ գործին առնչվող անձինք իրենց վերադասներն են հանդիսացել, որոնց թվում՝ զորամասի հրամանատարի տեղեկալը, ով այդ ժամանակ հանդիսացել է հրամանատարի պաշտոնակատարը: Այդ պայմաններում նախաքննական մարմինը չի դիտարկել նշված վկաների նկատմամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված պաշտպանության միջոցներ կիրառելու՝ նրանց ծառայության վայրը փոխելու և այդպիսով հնարավոր ճնշումներից ապահովելու հնարավորությունը:

- Դատաբժիշկ փորձագետը Սուրեն Մուրադյանի մոտ հայտնաբերված առաջին և հիմնական արյունազեղումն առաջանալու վաղեմության կապակցությամբ նշել է, որ այն առաջացել է մահվանից «ավելի քան 8-ից 10 օր առաջ», փաստորեն նշելով, որ այն կարող էր առաջանալ այդ ժամանակահատվածից առաջ ցանկացած ժամանակ, որով էական նշանակություն ունեցող այդ հարցին տվել է շատ անորոշ պատասխան և զգալիորեն նվազեցրել ապացույցի ապացուցողական ուժը, իսկ նախաքննական մարմինը չի պարզել այդ հարցը, այդ թվում այն, թե ինչ է նշանակում այդ

արտահայտությունը և ինչու հնարավոր չի եղել նշելու արյունազեղումն առաջանալու կոնկրետ ժամանակն այն դեպքում, երբ մյուս արյունազեղման դեպքում նշվել է, որ այն առաջացել է մահվանից 1-2 օր առաջ:

- Երբևէ չի կատարվել տեղանքի զննություն, այդ թվում՝ չի զննվել զորամասի հրամանատարի պաշտոնակատարի աշխատասենյակը:

- Նույնիսկ այն պարագայում, երբ գործով ձեռք են բերվել տվյալներ այն մասին, որ գործին ներգրավված սպաներից առնվազն 2-ն առնչություն են ունեցել զորամասի շտաբում տեղի ունեցած բռնության դեպքին, ընդ որում՝ զորամասի հրամանատարի պաշտոնակատարի կողմից բռնություն է գործադրվել նույն դեպքի կապակցությամբ Սուրեն Մուրադյանի հետ շտաբ կանչված մյուս զինծառայողի նկատմամբ, քննության ընթացքը չի փոխվել, 2002թ. հուլիսի 21-ի վիճաբանությանը հաջորդող օրերին կատարվածի բազմակողմանի քննություն չի իրականացվել և քննության համար առանցքային է դարձվել հենց վիճաբանության հանգամանքը: Դեպքից միայն երկու տարի հետո է սպաներից մեկը հայտնել, որ այդ վիճաբանության ժամանակ պատահաբար հարված է հասցվել Սուրեն Մուրադյանի որովայնի հատվածին, նախաքննության մարմինը հեշտությամբ ընդունել է այդ պնդումը, մինչդեռ առկա չի եղել այն հիմնավորող որևէ օբյեկտիվ ապացույց: Հետագա ամբողջ քննությունը՝ այդ թվում բոլոր դատաբժշկական փորձաքննություններն ուղղված են եղել հիմնավորելու այն վարկածը, որ առաջին արյունազեղումն ու փայծաղի ենթապատյանային պատռվածքն առաջացել են պատահական հարվածի հետևանքով: Այդ վարկածն ամբողջությամբ հիմնված է եղել դեպքերին առնչություն ունեցող այն սպայի ցուցմունքի վրա, որը չէր կարող համարվել օբյեկտիվ վկա և որը վարույթի ամբողջ ընթացքում տվել է հակասող ցուցմունքներ:

- Թեև փորձագետները նշել են, որ առաջին արյունազեղումն ու փայծաղի ենթապատյանային պատռվածքն առաջացել են մեկ հարվածի հետևանքով, սակայն այդ հետևությունը կատարվել է միայն այդ մեկ վարկածը փորձագետներին ներկայացնելու պայմաններում, ինչը չի կարող համարվել դատաբժշկական փորձագետներին չներկայացված սցենարի հավանականությունը բացառող հանգամանք:

- Որևէ համոզիչ բացատրություն չի տրվել այն հանգամանքի վերաբերյալ, որ Սուրեն Մուրադյանից մահվանից առաջ հոսպիտալում վերցված արյան միևնույն նմուշում սկզբում չեն հայտնաբերվել մալարիայի հարուցիչներ, իսկ հետո /դատաբժշկական փորձաքննությամբ/ դրանք հայտնաբերվել են: Այդ կապակցությամբ բացատրություններ չեն ներկայացվել կամ ներկայացվել են իրար հակասող բացատրություններ: Համոզիչ բացատրություններ չեն ներկայացվել նաև այն հարցի կապակցությամբ, թե հնարավոր էր, որ հարվածի հետևանքով 10*9 սմ չափերի արյունազեղում և փայծաղի ենթապատյանային պատռվածք առաջացած լինելու պայմաններում Ս. Մուրադյանի մոտ ցավի ակնհայտ դրսևորումներ չլինեին:

- Որևէ էական փորձ չի արվել պարզելու, թե Սուրեն Մուրադյանի մահվանից 1-2 օր առաջ առաջացած արյունազեղումն ինչի հետևանքով է առաջացել և ինչ կապ ունի այն

փայծաղի պատուվածքի հետ: Համարվել է, որ արյունազեղումն առաջացել է հոսափտալում վայր ընկնելու հետևանքով, սակայն անտեսվել է, որ վայր ընկնելը տեղի է ունեցել մահվանից երկու ժամ, այլ ոչ թե 1-2 օր առաջ: Ավելին՝ պարզ չէ, թե նախաքննական մարմինն ինչ հիմքով է պարզված համարել, որ վայր ընկնելիս Սուրեն Մուրադյանի ձեռքը եղել է փորի տակ:

- Գլխավոր դատախազի ավագ օգնականի որոշման մեջ նշվել է, որ պարզվել է, թե Սուրեն Մուրադյանին զորամասի շտաբում ծեծի են ենթարկել փայտե ձողով, իսկ գործի նյութերում առկա, ԼՂՀ ԱԱԾ տնօրենի գրության մեջ օգտագործվել է «Սուրեն Մուրադյանի հայտնի ծեծ» արտահայտությունը: Թեև վերջինի վերաբերյալ տրվել է պարզաբանում այն մասին, որ այդ արտահայտությունը գործածվել է որպես միջադեպի հակիրճ բնորոշիչ և որևէ ենթատեքստ չի պարունակում, այնուհանդերձ Դատարանը համարում է, որ այն համոզիչ բացատրություն չէ, և այդ փաստաթղթերի բովանդակությունից պարզ է դառնում, որ իշխանություններն առնվազն բավարար ապացույց են ունեցել այն մասին, որ Սուրեն Մուրադյանը ենթարկվել է ծեծի, սակայն գործողություններ չեն ձեռնարկել այդ ուղղությամբ:

Այվազյանն ընդդեմ Հայաստանի (գանգադ թիվ 56717/08, 1 հունիս 2017թ.)

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ քննություն իրականացնող մարմնի կողմից ոչ մի ջանք չի գործադրվել՝ պատահաբար ներգրավված ոստիկանության ծառայողների հավանական հանցավոր համաձայնությունը կանխելու համար: Մասնավորապես, ներգրավված ոստիկանության յոթ ծառայողներից ոչ մեկը պատահարից հետո առանձին չի պահվել, և միայն նրանցից երկուսը՝ Ա.Ս.-ն և Հ.Գ.-ն են հարցաքննվել միևնույն կամ հաջորդ օրը: Մյուս երեքը՝ Հ.Գրի.-ն, Ն.Ն.-ն և Ա.Ա.-ն հարցաքննվել են զգալի ուշացումներով, որոնք կազմել են համապատասխանաբար՝ ութ, ինը և տասը օր: Թեև առկա չեն ապացույցներ՝ ենթադրելու համար, որ այդ ծառայողները գործել են միմյանց կամ Թումանյանի ոստիկանության ուժերի՝ իրենց գործընկերների հետ համաձայնեցված գործողություններով, այնուամենայնիվ, զուտ այն հանգամանքը, որ նման համաձայնեցված գործողությունների վտանգը նվազեցնելուն ուղղված անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվել, վկայում է քննության պատշաճ ընթացքի մեջ առկա թերությունների մասին (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Ramsahai-ը* և *այլք ընդդեմ Նիդեռլանդների* [ՄՊ], թիվ 52391/99, § 330, ՄԻԵԴ 2007-II):

- Երկրորդ, պատահաբար ներգրավված ոստիկանության ծառայողներից երկուսը՝ Գ.Մ.-ն և Ռ.Մ.-ն, ընդհանրապես չեն հարցաքննվել: Այս հարցին պետք է առանձնակի ուշադրություն դարձնել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռ.Մ.-ն եղել է ոստիկանության այն չորս ծառայողներից մեկը, որը կրակ է արձակել Սեյրան Այվազյանի վրա:

- Երրորդ, հաշվի առնելով այդ հարցաքննությունների կատարման եղանակը, ՄԻԵԴ-ը նկատում է, որ ոստիկանության ծառայողներից պարզապես պահանջվել է հաշվետվություն ներկայացնել պատահարի մասին, և նրանց շատ քիչ թվով հարցեր են

ուղղել՝ չնայած նրանց ցուցմունքներում առկա են եղել բազմաթիվ ակնհայտ հակասություններ և անհամապատասխանություններ: Նույնիսկ այն մի քանի հարցերը, որոնք տրվել են նրանց, կա՛մ բավականաչափ հավատաքննչական բնույթի և մանրամասն չեն եղել, կա՛մ դրանցով հնարավոր չի եղել պարզել մահացու կրակոցի հանգամանքները: Մի շարք՝ գործին չափազանց վերաբերելի փաստեր անտեսվել են, և քննիչն առանց պատշաճ պարզաբանման զուտ ընդունել է այն ոստիկանության ծառայողների հաշվետվությունները, որոնք չէին կարող հանդես գալ որպես անաչառ վկաներ: Որևէ փորձ չի կատարվել՝ պարզելու, *inter alia*, այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչու են տասը գնդակից վեցն արձակվել Սեյրան Այվազյանի մեջքի ուղղությամբ, եթե ոստիկանության բոլոր ծառայողները ենթադրաբար նշան են բռնել նրա ոտքերին. պարզվել է, որ նրանցից առնվազն մեկը կրակ է արձակել ավելի բարձր՝ կրծքավանդակի հատվածի ուղղությամբ (տե՛ս *mutatis mutandis*, *Karandja-ն ընդդեմ Բուլղարիայի*, թիվ 69180/01, § 66, 2010 թվականի հոկտեմբերի 6): Ուստի պարզվում է, որ տվյալ հարցաքննությունները զուտ ձևական բնույթ են կրել, և ՄԻԵԴ-ը դրանք չի համարել որպես կատարված մահացու կրակոցի հանգամանքները պարզելու լուրջ և մանրակրկիտ ուսումնասիրության փորձ:

- Չորրորդ, որևէ ցուցմունք չի վերցվել ոստիկանության ուժերին չպատկանող անձանցից, որոնք ձերբակալման գործընթացի ժամանակ ակնհայտորեն գտնվել են տան շրջակայքում, ինչպես օրինակ՝ գյուղապետը, հրշեջ ծառայության աշխատակիցները և շտապօգնության բժիշկները: Թեև Վճռաբեկ դատարանը հայտնել է, որ ոստիկանության ծառայողներից բացի, կրակոցի ականատեսներ չեն եղել, սակայն պարզ չէ, թե ինչ ապացույցների վրա է հիմնված եղել այդ հայտարարությունը: Անհերքելի է այն փաստը, որ պատահարը տեղի է ունեցել դրսում՝ նախամուտքում, և տեսանելի է եղել նույնիսկ այն ոստիկանության ծառայողների համար, որոնք ներգրավված չեն եղել ձերբակալման գործընթացում և մահացու կրակոցներին: Վերը նշված անձանցից ոչ մեկին, այնուամենայնիվ, հարցաքննության չեն կանչել՝ պարզելու, թե արդյոք նրանք ականատես են եղել և ինչ չափով են ականատես եղել պատահարին: Քննիչը նույնպես չի փորձել հաստատել այն գյուղացիների ինքնությունը, որոնք, մի քանի ոստիկանության ծառայողների ցուցմունքների համաձայն, չնայած գտնվելով որոշակի հեռավորության վրա, հավաքված են եղել դեպքի վայրում և հավանաբար հնարավորություն են ունեցել լույս սփռել գործի հանգամանքների վրա:

- Ինչ վերաբերում է այլ քննչական միջոցառումներին, ապա ՄԻԵԴ-ը նշում է, որ համապատասխան մարմինները հրազենագիտական փորձաքննության կամ այլ միջոցով ստույգ չեն պարզել կրակոցի ժամանակ հրազեն գործադրած ծառայողների հստակ գտնվելու դիրքերը: Հետևաբար, առկա է եղել պարզ հակասություն կրակոցի ժամանակ ոստիկանության ծառայող Ա.Ս.-ի՝ ոստիկանության ծառայող Հ.Գրի.-ի կողքին գտնվելու վերաբերյալ վերջինիս ցուցմունքի և պատահարի տեղանքի քարտեզի միջև, որի համաձայն, Հ.Գրի.-ն գտնվել է նախամուտքում, իսկ ոստիկանության ծառայող Ա.Ս.-ն՝ նրա կողքին: Գնդակների հստակ հետազոծող որոշելու որևէ փորձ չի կատարվել, ինչպես նաև չի իրականացվել կատարված դեպքի վերարտադրություն: Հրազենագիտական

փորձաքննությամբ նույնպես չի պարզաբանվել կարևոր տեղեկատվություն այն մասին, թե ում կողմից է արձակվել մահացու կրակոցը: Ավելին, ոստիկանության ծառայողների միջև առերեսումներ չեն իրականացվել: Առանց այդպիսի քննչական միջոցառումներ ձեռնարկելու, ձերբակալումն իրականացնող ոստիկանության ծառայողների հաշվետվությունները՝ դեպքերի մասին, անհնարին է եղել ստուգել: Հարկ է նաև նշել, որ որևէ գնահատում չի իրականացվել այն մասով, թե արդյոք ոստիկանության ծառայող Հ.Գև.-ի կյանքին սպառնացող ենթադրյալ վտանգին՝ ոստիկանության ծառայողի արձագանքը համաչափ է եղել. գնահատում չիրականացնելը հատկապես զարմանալի է՝ հաշվի առնելով արձակված կրակոցների (տասնհինգ, որից տասը դիպել են թիրախին) թիվը և այն փաստը, որ Սեյրան Այվազյանը զինված է եղել ոչ թե հրազենով, այլ միայն դանակով:

Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի (զանգար թիվ 27524/09, 16 նոյեմբեր 2017թ.)

ՄԻԵԴ-ն ի սկզբանե նշել է, որ դիմումատուի դատեր մահվան առնչությամբ, որպես այդպիսին, որևէ քրեական վարույթ չի հարուցվել, սակայն Կ.Մ.-ի մահվան օրը դատախազությունը նրա մահվան առնչությամբ հետաքննություն է սկսել, որի ընթացքում նշանակվել է դիախերձում, ինչպես նաև հարցաքննվել է Կ.Մ.-ի բուժման գործընթացին ներգրավված բուժանձնակազմը: Այս առնչությամբ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ պաշտոնապես հարուցված քրեական վարույթի բացակայության պայմաններում, հարցաքննված անձանց, այդ թվում՝ շտապօգնության բժշկին և բուժքրոջը պարզապես խնդրել են իրադարձությունների վերաբերյալ բացատրություն տալ: Ավելին, չնայած շտապօգնության բժշկի և բուժքրոջ կողմից տրված՝ իրադարձությունների վերաբերյալ բացատրությունները՝ ներարկված դեղամիջոցների տեսակի և քանակի մասով, հակասել են միմյանց, քննիչը որևէ լուրջ քայլ չի ձեռնարկել նրանց սկզբնական ցուցմունքների միջև անհամապատասխանությունները պարզաբանելու համար: ՄԻԵԴ-ն այնուհետև արձանագրել է, որ քննության ընթացքում հարցաքննված բուժաշխատողներից ոչ մեկը հետագայում չի կանչվել դատարանում երդմամբ ցուցմունք տալու համար՝ չնայած դիմումատուն այդպիսի հատուկ պահանջ էր ներկայացրել, ինչը կարող էր հնարավորություն տալ ստուգելու նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Հարկ է նշել, որ թե՛ քննություն իրականացնող մարմինները և թե՛ դատարաններն իրենց որոշումները կայացնելիս հիմնվել են բուժանձնակազմի անդամների վերոնշյալ ցուցմունքների վրա:

ՄԻԵԴ-ը նաև նշել է, որ քննություն իրականացնող մարմինը հետաքննության ժամանակ չի ապահովել դիմումատուի անմիջական մասնակցությունը: Քանի որ չի հարուցվել քրեական վարույթ, դիմումատուն վարույթում չի ունեցել տուժողի պաշտոնական կարգավիճակ, որը նրան թույլ կտար օգտվելու այդ կարգավիճակին հատուկ իրավունքներից, ինչպես օրինակ՝ գործի նյութերում ներառելու համար փաստաթղթեր կամ այլ նյութեր ներկայացնելը կամ փորձագետներին հարցեր ուղղելը:

Փաստացի, դիմումատուին քննությունն իրականացնող մարմին մի քանի անգամ ներկայացրել է համապատասխան բժշկական ցուցումների պատճեններն ու բժշկական գրականությունից քաղվածքներ և հետագայում դատարանում հղում է կատարել դրանց, սակայն նրա փաստարկներն այդպես էլ չեն ուսումնասիրվել: Ավելին, չնայած այն փաստին, որ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննությանը դիմումատուի մասնակցությունն ի վերջո թույլատրվել է վարչական շրջանի դատախազի 2008 թվականի մարտի 3-ի որոշմամբ, պարզվում է, որ նրա մասնակցությունը զուտ ծևական բնույթ է կրել, քանի որ համապատասխան փաստաթղթային ապացույցներով հիմնավորված նրա փաստարկները չեն ուսումնասիրվել փորձագետների հանձնաժողովի կողմից՝ իր եզրահանգումներն անելու ժամանակ: Հետևաբար, չի կարելի համարել, որ դիմումատուին՝ հաշվի առնելով նրա անմիջական հետաքրքրվածությունը և անձնական մտահոգությունը հետաքննության առարկայի նկատմամբ, գործընթացին ներգրավված է եղել այնքանով, որքանով անհրաժեշտ է եղել նրա շահերը պաշտպանելու համար:

ՄԻԵԴ-ն այնուհետև նշել է, որ ո՛չ դիախերձմամբ և ո՛չ էլ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննությամբ վերջնականապես չի պարզվել դիմումատուի դատարանական պատճառը: Այսպիսով, համաձայն դիախերձման արձանագրության, նա մահացել է օրգանիզմի ընդհանուր թունավորումից, որն առաջացել է նյարդային անոթների տարածուն և ցրված թրոմբոզի հետևանքով առաջացած գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների խանգարման հետևանքով: Նշանակվել է երկու լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն. մեկը նախաքննության ընթացքում, որի արդյունքում կայացվել է թիվ 89 դատաբժշկական եզրակացությունը, և մյուսը՝ դատախազի 2008 թվականի մարտի 3-ի որոշման համաձայն իրականացված լրացուցիչ քննության ընթացքում, որի արդյունքում կայացվել է թիվ 6 դատաբժշկական եզրակացությունը: Չնայած Կառավարությունը ՄԻԵԴ-ին չի տրամադրել թիվ 89 դատաբժշկական եզրակացության ամբողջական և ճշգրիտ օրինակը, ըստ հասանելի նյութերի՝ այս եզրակացության մեջ նշվել է, որ Կ.Մ.-ին ցուցաբերված բժշկական օգնությունը եղել է ճիշտ և ախտանիշների վրա հիմնված: Այնուամենայնիվ, պարզ չէ, թե արդյոք այս դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է օրգանիզմի ընդհանուր թունավորման պատճառը, որն առաջացել է նյարդային անոթների տարածուն և ցրված թրոմբոզի հետևանքով առաջացած գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների խանգարման հետևանքով, որը ենթադրաբար Կ.Մ.-ի մահվան պատճառն է եղել: Ավելին, թիվ 6 դատաբժշկական եզրակացությամբ նույնպես հստակ չի պարզվել, թե կոնկրետ ինչի հետևանքով է առաջացել Կ.Մ.-ի նյարդային անոթների թրոմբոզը, որը հանգեցրել է գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների խանգարման, ինչի հետևանքով էլ տեղի է ունեցել օրգանիզմի ընդհանուր թունավորումը: Միևնույն ժամանակ, այս եզրակացության մեջ նշվել է, որ պարզ չէ, թե արդյոք Կ.Մ.-ն ծնված օրվանից տառապել է այնպիսի հիվանդությամբ, որը հավանաբար կարող էր կապ ունենալ նրա մահվան հետ, և որ համապատասխան բժշկական փաստաթղթերի բացակայության պայմաններում հնարավոր չի եղել պարզել, թե արդյոք նա ունեցել է որևէ ֆունկցիոնալ խանգարում, որը

կարող էր առաջացնել ցնցումային համախտանիշ: Այս առնչությամբ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ քննություն իրականացնող մարմինը և դատարանները որևէ փորձ չեն արել հանգուցյալի՝ նրա մահվանը հանգեցրած կրիտիկական վիճակի պատճառները պարզելու համար և, առանց լրացուցիչ պարզաբանման, բավարար են համարել դատաբժշկական փորձագետների եզրահանգումներին հղում կատարելը, որոնցով, ինչպես արդեն նշվել է, պարզապես հաստատվել է մահվան՝ դիախերձմամբ որոշված հնարավոր պատճառը, սակայն չի տրվել որևէ բացատրություն, թե նախ և առաջ այդ վիճակն ինչի հետևանքով կարող էր առաջանալ: Այնուհետև ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ դիմումատուն և հանգուցյալի մյուս բարեկամները ո՛չ հետաքննության և ո՛չ էլ դատական վարույթի ընթացքում չեն հարցաքննվել՝ պարզելու համար, թե արդյոք նախկինում նա ունեցել է որևէ այնպիսի խանգարում, որը կարող էր հանգեցնել նյարդային անոթների տարածուն և ցրված թրոմբոզի: Այդպիսի հանգամանքներում ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ իշխանությունները չեն գործել բավարար ջանասիրությամբ և խնամքով, որպեսզի պարզեն դիմումատուի դատեր մահվան պատճառը:

ՄԻԵԴ-ը նշել է նաև, որ հետաքննությամբ պարզվել է, որ շտապօգնության բրիգադը դիմումատուի դատերը պատշաճ բժշկական օգնություն չի ցուցաբերել: Հետևաբար, զարմանալի է այն փաստը, թե ինչու դրա մասին ընդհանրապես չի նշվել կամ այն հաշվի չի առնվել քրեական վարույթ հարուցելը մերժելու մասին քննիչի որոշման մեջ: Ավելին. այս որոշման մեջ, որը հետագայում հաստատվել է դատարանների կողմից, նշվել է, որ Կ.Մ.-ին առաջին բժշկական օգնությունը տրամադրվել է պատշաճ ձևով, մինչդեռ, միևնույն ժամանակ, բժիշկն իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար քննիչի պահանջով ստացել է նկատողություն: Այդպիսի հանգամանքներում պարզ է դառնում, որ քննություն իրականացնող մարմինը դիմումատուի դատերը ցուցաբերված բժշկական օգնության պատշաճ լինելու վերաբերյալ հանգել է ոչ ճիշտ եզրահանգումների, և որ դատարանները պարզապես հաստատել են այդ եզրահանգումները՝ առանց լրացուցիչ ուսումնասիրելու, թե արդյոք շտապօգնության բրիգադի՝ իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելը հանգուցյալի վիճակի վրա որևէ որոշիչ բացասական ազդեցություն է ունեցել:

Գուլյանն ընդդեմ Հայաստանի (զանգապ թիվ 11244/12, 20 սեպտեմբեր 2018թ.)

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ քննություն իրականացնող մարմիններն ի սկզբանե ընդունել են Լևոն Գուլյանի փախուստի փորձի վարկածը և ամբողջ քննությունն իրականացրել են այդ ենթադրության հիման վրա՝ առանց լրջորեն հարցականի տակ դնելու այն կամ փորձելու ստուգել մեկ այլ հնարավոր սցենար: Իրադարձությունների այդ տարբերակը ոչ միայն ամբողջությամբ հիմնված է եղել ոստիկանության ծառայողներ Գ.Թ.-ի և Ա.Մ.-ի ցուցմունքների վրա, որոնք, ըստ երևույթին, ներգրավված են եղել այդ օրվա իրադարձություններում, և որոնք չէին կարող համարվել անկողմնակալ վկաներ, այլ նաև այն չի հիմնավորվել որևէ ապացույցով: Այսպիսով, ընդհանրապես առկա չէ որևէ ապացույց, որ Լևոն Գուլյանը հրավիրվել է ՔՀԳՎ մեկ այլ վկայի՝ Մ.Գ.-ի հետ առերեսման

համար, որից նա հետո, ենթադրաբար, փորձել է փախչելով խուսափել: Ավելին, պարզվում է, որ նրա ենթադրյալ փախուստի համար առաջին անգամ այդպիսի շարժառիթ է ներկայացվել քննության բավականին ուշ փուլում: Քննություն իրականացնող մարմինները չեն պարզել, թե ինչու է օրենքով սահմանված կարգով հրավիրվելու փոխարեն գործով միայն որպես վկա ներգրավված Լևոն Գուլյանը ոստիկանության ծառայողների կողմից տարվել ՔՀԳՎ, կամ թե ինչու է նա, օրենքի խախտմամբ, սկզբում տարվել ՔՀԳՎ այն դեպքում, երբ Ս.Վ.-ի մահվան փաստի առթիվ քննությունն իրականացվում էր մեկ այլ մարմնի, մասնավորապես, դատախազության կողմից: Ավելին, առկա չէ որևէ ապացույց, որ Լևոն Գուլյանը պատահաբարից առաջ հարցաքննվել է ՔՀԳՎ-ում, և այսպես կոչված «օպերատիվ գրույցի» բնույթը մնում է ոչ հստակ և չբացատրված:

ՄԻԵԴ-ն այնուհետև նշել է, որ մի շարք քննչական միջոցառումներ չեն իրականացվել: Նախևառաջ, քննություն իրականացնող մարմինները չեն պարզել, թե ում են պատկանել պատուհանի վրա հայտնաբերված՝ ձեռքի ափի հետքերը և մատնահետքերը, և սահմանափակվել են ծառայողներ Գ.Թ.-ի, Ա.Մ.-ի և հավաքարարի մատնահետքերի զննմամբ, մինչդեռ չի կարելի բացառել, որ ՔՀԳՎ-ի այլ աշխատողներ նույնպես ներգրավված են եղել այդ օրվա իրադարձություններում: Երկրորդ, բավարար միջոցներ չեն ձեռնարկվել՝ պարզելու Լևոն Գուլյանի հագուստի վրա և եղունգների տակ հայտնաբերված բնական և քիմիական մանրաթելերի ծագումը: Երրորդ, չի իրականացվել քննություն՝ պարզելու դատաբժշկական փորձագետի կողմից արձանագրված վնասվածքների ծագումը, որոնք Լևոն Գուլյանը ստացել էր, մինչ կենդանի էր, և արդյոք դրանք կարող էին առաջանալ վատ վերաբերմունքի հետևանքով: Չորրորդ, այն քննչական փորձարարությունը, որով պետք է պարզվեր Լևոն Գուլյանի անկման մեխանիզմը, չի կատարվել համապատասխան մանեկենի բացակայության պատճառով: Հինգերորդ, փորձ չի կատարվել՝ պարզելու, թե ինչու են Լևոն Գուլյանի կոշկաքուղերն իր տաբատի գրպանում հայտնաբերվել: Ինչպես արդեն վերևում նշվել է, սրանք և քննության մի շարք այլ թերություններ հաստատվել են ներպետական դատարանների կողմից: Նույնիսկ եթե ենթադրենք, որ հնարավոր է եղել քննությունը վերսկսելուց հետո վերացնել տվյալ թերությունները, ոչինչ թույլ չի տվել ենթադրելու, որ քննությունը վերսկսելու վերաբերյալ դատարանների կողմից որոշում կայացվելուց հետո այդ կապակցությամբ լուրջ փորձեր են կատարվել, կամ արդյունավետ միջոցներ են ձեռնարկվել: Ավելին, չնայած ներպետական դատարանների կրկնվող ցուցումներին, ոչ միայն վերը նշված քննչական փորձարարությունը երբևէ չի կատարվել, այլ նաև քննություն իրականացնող մարմինների կողմից հարցականի տակ են դրվել դրա արդյունավետությունն ու անհրաժեշտությունը՝ չնայած այն հանգամանքին, որ ներպետական դատարաններն ընդգծել են այն:

Վերջապես, ՄԻԵԴ-ն արձանագրել է, որը դիմումատուին չի ծանուցվել քննիչի 2012 թվականի փետրվարի 8-ի որոշման մասին, և նշել է, որ իշխանություններն այդ առնչությամբ չեն ապահովել քննությանը դիմումատուի մասնակցությունը՝ որպես

Լևոն Գուլյանի մերձավոր ազգական:

Վերոհիշյալը բավարար է, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ քննություն իրականացնող մարմինները չեն ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պարզելու Լևոն Գուլյանի մահվան հանգամանքները և այն, որ քննությունն արդյունավետ չի եղել:

Մեղաքայանն ընդդեմ Հայաստանի (գանգալը թիվ 247/11, 19 մարտ 2020թ.)

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ ներպետական մարմինների կողմից կատարված նախնական քննությունը բավարար չի եղել մի քանի պատճառներով:

Առաջին, դիմումատուի ամուսնու մահվան գործով նախնական քննությունը դադարեցվել է չորս անգամ, և որ նախնական քննությունը դադարեցնելու մասին որոշումը դատական վերանայումից հետո վերացվել է երեք անգամ, քանի որ հետաքննության և նախաքննության մարմինները ամբողջությամբ չէին պարզել պատահարի հանգամանքները: Այն դատական որոշումների մեջ, որոնցով վերացվել են նախնական քննությունը դադարեցնելու մասին որոշումները, մանրամասն ներկայացվել են նախնական քննության հետ կապված անհամապատասխանությունները և թերությունները, որոնց դատարանների կարծիքով պետք է անդրադարձ կատարվեր. մինչդեռ նախաքննության մարմինները լիարժեք չեն կատարել այդ հանձնարարականները. այս փաստը մատնանշվել է հետագա դատական որոշումներով: Ավելին, ի տարբերություն նախնական քննությունը դադարեցնելու մասին որոշումների դեմ դիմումատուի կողմից ներկայացված բողոքները բավարարող նախորդ դատական որոշումների՝ այն որոշումներում, որոնցով անփոփոխ են թողնվել քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումները, անդրադարձ չի կատարվել ավելի վաղ կայացված որոշումներում մատնանշված թերություններին և այն հարցին, թե արդյոք դրանք փաստացի շտկվել են նախնական քննություն իրականացնող մարմինների կողմից, թե ոչ:

ՄԻԵԴ-ը գտել է, որ այն դատական որոշումների կրկնությամբ, որոնցով գործը հետ է ուղարկվել մեղադրողին այն պատճառով, որ մեկ վարույթի շրջանակում նախաքննության մարմինը թույլ է տվել մի քանի սխալներ, դիմումատուի գործով բացահայտվել է դատական համակարգի գործունեության լուրջ անկատարություն (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Բիրզիկովսկին ընդդեմ Լեհաստանի* [Byrzykowski v. Poland], թիվ 11562/05, § 111, 2006 թվականի հունիսի 27):

Ավելին, եղել են մի շարք թերություններ մասնավորապես վարույթի վաղ փուլում, որոնք բացասական ազդեցություն են ունեցել գործի փաստերը պարզելու ցանկացած հեռանկարի վրա: Մասնավորապես չի պահպանվել դեպքի վայրը, իսկ պատահարից հետո քննիչի կողմից չի նշանակվել որևէ փորձագիտական եզրակացություն: Դա կատարվել է միայն այն բանից հետո, երբ դատարանը վերացրել է քրեական գործի վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը և մեղադրողին կոնկրետ հանձնարարել է ձեռք բերել փորձագիտական եզրակացություն: Արդյունքում, էլեկտրատեխնիկական փորձաքննությունը նշանակվել է դեպքից ավելի քան չորս ամիս անց: Այնուամենայնիվ, փորձագետը չի կարողացել իրականացնել դեպքի վայրի առաջնային զննություն, քանի

որ 6 000 վոլտ հզորությամբ մեքենայական սրահի առաջին հատվածամասի ռեզերվային էլեկտրաապահովման խցի վիճակը պահպանված չի եղել: Բացի այդ, մի շարք հարցեր, օրինակ՝ մարմնի դիրքը, հանձնարարված աշխատանքի ծավալը և Երևանի ՋԷԿ-ում աշխատանքների անվտանգության համար պատասխանատու անձնակազմի կողմից անվտանգության համապատասխան կանոնակարգերի պահանջների պահպանումը, ռեզերվային էլեկտրաապահովման խցի դռան բացումը և գործը երրորդ անգամ հետ ուղարկելուց հետո փաստաթղթաբանական փորձագետի կողմից հաստատված՝ աշխատանքային կարգադրության մեջ կատարված փոփոխությունների պատճառները նույնպես չեն պարզաբանվել նախաքննության ընթացքում:

Անահիտ Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի (գանգառ թիվ 3673/11, 7 մայիս 2020)

ՄԻԵԴ-ը նկատել է, որ քննությամբ, որը տևել է ավելի քան տասնութ տարի, մինչ այժմ չի հաջողվել պարզել դիմումատուի որդու մահվան ճշգրիտ հանգամանքները, որոնք, ըստ պաշտոնական վարկածի, տեղի են ունեցել առնվազն երեք ականատեսի ներկայությամբ:

ՄԻԵԴ-ը համարել է, որ չկա հիմնավոր բացատրություն քննությամբ նույնիսկ այնպիսի էական խնդիրներ չպարզելու վերաբերյալ, ինչպիսիք են հանգուցյալի մարմնի վրա ոչ հրազենային վնասվածքների ծագումը, որոնք, ինչպես պարզել են փորձագետները, չեն առաջացել կրակելուց հետո նրա ընկնելու հետևանքով, կամ այն զենքի վերաբերյալ, որով արձակվել է կրակոցը:

ՄԻԵԴ-ը նշել է, որ քննության առաջին իսկ օրվանից իշխանությունները հետևել են այն վարկածին, որ Կ.Ս.-ն պատահաբար կրակել է դիմումատուի որդուն, ինչպես նշված է քրեական վարույթ հարուցելու մասին որոշման մեջ: ՄԻԵԴ-ը նաև նշել է, որ ներպետական դատարանները գործը երեք անգամ վերադարձրել են մեղադրանքի կողմին այն մասով, որով դրանք վերաբերել են Կ.Ս.-ին առաջադրված մեղադրանքներին՝ մատնանշելով քննության անհամապատասխանությունները և թերությունները, որոնք դատարանների կարծիքով պետք է լուծվեին: Նման հանգամանքներում, ՄԻԵԴ-ը գտել է, որ դիմումատուի գործով բացահայտվել է դատական համակարգի գործունեության լուրջ թերություն:

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ գործն ուսումնասիրելու հարցում իշխանությունները չեն ցուցաբերել պահանջվող մանրակրկիտ վերաբերմունքը: Մասնավորապես Ա.Կ.-ի այն հայտարարությունից հետո, որով նա մեղադրում էր Մ.-ին դիմումատուի որդուն սպանելու մեջ և դրանով իսկ առաջարկում իրադարձությունների բոլորովին այլ տարբերակ, քան նախկինում նկարագրվել էր նրա և մյուս վկաների կողմից, իշխանությունները չեն ձեռնարկել որևէ նշանակալի քայլ՝ այլ վարկածի հետևելու և վկայի կողմից նկարագրված հանգամանքները քննելու համար: Ավելին, իշխանությունները հապճեպ ընդունել են Ա.Կ.-ի՝ այդ հայտարարությունից հետագայում հրաժարվելը՝ առանց ուսումնասիրելու վկայի վրա որևէ հոգեբանական կամ այլ տեսակի ճնշման հնարավորությունը:

ՄԻԵԴ-ը չի կարողացել անտեսել այն մակերեսային մոտեցումը, որով իշխանությունները փորձել են գտնել Ա.Կ.-ին, որը նրանց կարծիքով բնակվում էր Ռուսաստանում: Մասնավորապես, ներպետական իշխանությունները Ա.Կ.-ի հասցեն պարզելու համար որևէ պահանջ չեն ներկայացրել Ռուսաստանի իշխանություններին, որպեսզի նրան կանչեն լրացուցիչ հարցաքննության:

Վերոնշյալի լույսի ներքո՝ ՄԻԵԴ-ը գտել է, որ իշխանություններն արդյունավետ քննություն չեն իրականացրել դիմումատուի որդու մահվան առնչությամբ:

Հնարավոր ոչ իրավաչափ մահվան դեպքերի քննության վերաբերյալ Մինեսոտայի 2016 թվականի արձանագրությունը (The Minnesota Protocol on the Investigation of Potentially Unlawful Deaths)²

2016 թվականի Մինեսոտայի արձանագրությունը միջազգային բարձր որակավորում ունեցող փորձագետների կողմից մշակված վերլուծություն է, որը սահմանում է բռնի մահվան դեպքերով իրականացվող քննչական գործողությունների մանրամասն ուղեցուցիչներ: Մասնավորապես, անդրադարձ է կատարվում դեպքի վայրի զննության, նմուշների վերցման, մարմինների զննության, արտաշիրմում կատարելու, կնախքային մնացորդների հետազոտման, հարցաքննությունների տակտիկայի և այլնի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները կասկած հարուցող մահվան հանգամանքների կապակցությամբ պաշտոնապես արդյունավետ քննություն իրականացնելու պետության պոզիտիվ պարտականությունների վերաբերյալ

Սուսաննա Անտոնյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշման մեջ ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումների լույսի ներքո քննարկման առարկա դարձնելով Ա.Անտոնյանի մահվան փաստի առթիվ իրականացված քննության արդյունավետությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ

ա) վարույթն իրականացնող մարմինն անմիջապես չի կատարել անհրաժեշտ անհետաձգելի քննչական գործողություններ, մասնավորապես միջոցներ չի ձեռնարկել «Սեքսուալաթուրգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ից Ա.Անտոնյանի վերաբերյալ փաստաթղթերը և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այլ պարագաները (հիվանդության պատմագրերը, իրականացված հետազոտությունների արդյունքները, բժշկական միջամտության առարկաները և այլն) առգրավելու ուղղությամբ: Դրա փոխարեն նախաքննության մարմինը գրությամբ դիմել է «Սեքսուալաթուրգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ի ղեկավարությանը՝ խնդրելով քննությանը տրամադրել Ա.Անտոնյանի վերաբերյալ առկա

² Հասանելի է <https://www.ohchr.org/Documents/Publications/MinnesotaProtocol.pdf> հղմամբ

բոլոր փաստաթղթերը, որին ի պատասխան ընկերության ղեկավարությունը հայտնել է, որ հիվանդության պատմագիրը տրվել է հիվանդին առձեռն: Գործի հետագա քննության ընթացքում Ա.Անտոնյանի հիվանդության պատմագիրն այդպես էլ չի հայտնաբերվել:

բ) Մինչդատական վարույթն իրականացնող մարմինը չի պարզել «Սեքսուաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում Ա.Անտոնյանի հետ նույն ժամանակահատվածում բուժում ստացած անձանց շրջանակը և նրանց ախտորոշումները:

գ) Տվյալներ ունենալով առ այն, որ բժիշկ Ա.Բաղդասարյանի կողմից նշանակված բուժման գործընթացն անմիջականորեն իրականացրել է բուժքույր Ս.Շահսուվարյանը՝ նախաքննության մարմինը երբևէ չի հարցաքննել նրան:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ՝ (ա), (բ), (գ) ենթակետերում նշված գործողությունների կատարման պարագայում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կատարելու, թե մահվան պատճառ հանդիսացած հիվանդությունը Ա.Անտոնյանը ձեռք է բերել մինչև «Սեքսուաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում հետազոտվելը և բուժում ստանալը, թե՛ այդ ընթացքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ պատկան մարմինները, չպահպանելով քրեադատավարական օրենքի պահանջները, շահագրգիռ երրորդ կողմին՝ Ա.Անտոնյանին, մասնակից չեն դարձրել որդու մահվան պատճառները բացահայտելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննություններին: Նախաքննության մարմինը վերջինիս է ներկայացրել արդեն հաստատված փաստերը, *ex post facto* մահվան պատճառը բացահայտող փորձաքննությունների արդյունքները: Այն, որ բողոքաբերը որպես շահագրգիռ երրորդ կողմ չի մասնակցել գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոնշյալ քննչական գործողություններին, խոչընդոտել է վերջինիս իրավունքների իրացմանը և սահմանափակել քննությանը նրա մասնակցության հնարավորությունը՝ դրանով կասկածի տակ դնելով կատարված քննչական գործողությունների արդյունքները:

Վճռաբեկ դատարանն ուշադրություն է հրավիրել նաև գործում առկա մի շարք այլ փաստական հանգամանքների, որոնք չեն պարզվել և պատշաճ գնահատման չեն ենթարկվել վարույթն իրականացնող մարմինների կողմից, սակայն էական նշանակություն ունեին գործի համար: Վճռաբեկ դատարանը փաստել է նաև, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը որևէ իրավական գնահատական չի տվել Ա.Անտոնյանին առաջին բուժօգնություն ցուցաբերած շտապօգնության աշխատակիցների կողմից իրենց մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում ցուցաբերած թերացումներին:

Ա.Անտոնյանի մահվան կապակցությամբ իրականացված քննության վերոնշյալ թերությունների արձանագրմամբ, կիրառելով կյանքի իրավունքի դատավարական բաղադրիչի կապակցությամբ ՄԻԵԴ-ի դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն

եզրահանգել է, որ Ս.Անտոնյանի մահվան փաստի առթիվ արդյունավետ քրեադատավարական քննություն չի իրականացվել:

Ինչպես երևում է Ս.Անտոնյանի գործի փաստերից՝ Վճռաբեկ դատարանը Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված պետության պոզիտիվ պարտականություն ունենալու պահանջը կիրառելի է գնահատել նաև բժշկական հսկողության ներքո գտնվող անձի մահվան դեպքում: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՄԻԵԴ-ը նման դեպքերում պետության պոզիտիվ պարտականությունների հետ կապված հարաբերականորեն ցածր չափանիշներ է նախատեսում (*ի թիվս այլնի, Calvelli and Caglio v. Italy* գործով 2002 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32967/96, պարբ. 49 և 51), սակայն, այնուամենայնիվ, գտնում է, որ այն ենթադրում է անկախ և արդյունավետ դատական համակարգի ստեղծում, որն ի վիճակի է պետական կամ մասնավոր բժշկական հսկողության ներքո գտնվող անձանց մահվան պատճառները վեր հանել և մեղավորներին պատասխանատվության ենթարկել:

Ռուզաննա Նիսազյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշմամբ կասկածելի մահվան առթիվ արդյունավետ քննություն իրականացնելու պետության պարտականության համատեքստում Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա է դարձրել կյանքի իրավունքի ենթադրյալ խախտման կապակցությամբ քրեական գործ հարուցելու փուլով եզրափակվող քննության արդյունավետության խնդիրը:

Այսպես, *Ռ.Նիսազյանի* գործով որոշման 25-րդ կետում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված. «(...) կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության գնահատման հիմնական չափանիշների համաձայն՝

ա) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքներն իրավասու մարմինների կողմից պետք է արժանանան արագ արձագանքի,

բ) իրավասու մարմինները պետք է գործեն պարզաճանաչ քննարկությամբ և արագությամբ,

գ) քննության արդյունքում պետք է հստակեցվեն դեպքի հանգամանքները,

դ) պետք է ապահովվի քննության նկատմամբ հասարակական հսկողությունը,

ե) այն իրականացնող պարասխանափուլ անձինք պետք է անկախ լինեն փյալ գործում ներգրավված անձանցից,

զ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներ ձեռք բերելու համար: Վարույթն իրականացնող մարմինները պետք է ձեռնպահ մնան շտապողական կամ թույլ պարճառաբանված հետևություններից, քանի որ քննության ցանկացած թերություն, որը հարցականի փակ է դնում մահվան պարճառները պարասխանափուլ անձանց կողմից պարզելու կարողությունը, վրանգում է քննության արդյունավետությունը, հետևաբար և «Մարդու իրավունքների և հիմնարար

ագապությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով պետության ստանձնած պարտավորությունների իրագործումը»:

Հիմք ընդունելով արձանագրված չափանիշները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ.

«(...) կյանքի իրավունքի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականությունը քրեական գործի հարուցման հարցի լուծման փուլում իրագործել հնարավոր չէ: [Ք]րեական գործի հարուցման փուլը, ի համեմատ քրեադատավարական ընթացակարգի մյուս փուլերի, ունի իր խնդիրներով պայմանավորված առանձնահատկությունները: Քրեադատավարական այս փուլի ընթացքում հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը ժամանակային, ինչպես նաև քննչական և այլ դատավարական գործիքակազմի սահմանափակության պայմաններում պետք է իրականացնեն որոշակի միջոցառումներ, պարզելու համար ներկայացված հաղորդման մեջ տեղ գրած այն տվյալները, որոնք վկայում են հանցագործության հարկանիշների առկայության մասին: Նշված սահմանափակումներով պայմանավորված՝ քրեական գործի հարուցման հարցը լուծելու իրավասությամբ օժտված մարմինը (պաշտոնատար անձը), օբյեկտիվ անհրաժեշտությունից ելնելով, պետք է ընտրություն կատարի, թե որ քննչական կամ այլ դատավարական գործողություններն են առաջնային և իրականացնի դրանք (...):

Ուստի, «Մարդու իրավունքների և հիմնարարագապությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով պետության ստանձնած պոզիտիվ պարտավորությունների իրագործումը՝ կյանքի իրավունքի ենթադրյալ խախտման փաստի առթիվ մանրամասն և արդյունավետ քրեադատավարական քննության իրականացումը քրեական գործի հարուցման փուլում հնարավոր չէ: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետության իրավագործության ներքո գտնվող անձի կասկածելի մահվան կապակցությամբ գործող քրեադատավարական օրենսդրության պայմաններում օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնել հնարավոր է բացառապես հարուցված քրեական գործի շրջանակներում»:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ պետության վերահսկողության ներքո (ոստիկանությունում, քրեակատարողական հիմնարկում և այլն) գտնվող անձը մահանում է, և պետությունը Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ուժով պարտավորություն է կրում ներկայացնել մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, ապա իրավասու մարմինները (պաշտոնատար անձինք) կասկածելի մահվան փաստի առթիվ պետք է հարուցեն քրեական գործ և քրեադատավարական ողջ գործիքակազմի ներգրավմամբ իրականացնեն հնարավոր ողջամիտ քայլերը՝ դեպքի հանգամանքները պարզելու համար: Այլ խոսքով՝ նման դեպքերում իրականացվող վարույթը չի կարող սահմանափակվել քրեական գործ հարուցելու փուլով և եզրափակվել քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշման կայացմամբ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Ռ.Նիսիզյանի գործով առկա փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Ռ.Նիսիզյանի ամուսնու՝ Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ մանրամասն և արդյունավետ քրեադատավարական քննություն չի իրականացվել: Որպես վերջին եզրահանգման հիմնավորում Վճռաբեկ դատարանը մասնավորապես նշել է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինները **քրեակատարողական հիմնարկի կալանավոր** Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ քննությունն իրականացրել են քրեական գործի հարուցման փուլում՝ ժամանակային, ինչպես նաև քննչական և այլ դատավարական գործիքակազմի սահմանափակության պայմաններում: Արդյունքում, Ժ.Բաղումյանի կյանքի իրավունքի ենթադրյալ խախտման կապակցությամբ վերջինիս կնոջ՝ Ռ.Նիսիզյանի կողմից ներկայացված հաղորդման մեջ բարձրացված մի շարք հարցեր՝ այն, որ Ժ.Բաղումյանին քրեակատարողական հիմնարկում պատշաճ բժշկական օգնություն չի ցուցաբերվել, նա արժանացել է անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և այլն, քննության առարկա չեն դարձել, մնացել են անպատասխան:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ ստորադաս դատարանները սույն գործով թույլ են տվել դատական սխալներ՝ դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, հետևաբար անհրաժեշտ է բեկանել ստորադաս դատարանների որոշումները, Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության երևան քաղաքի քննչական վարչության էրեբունու քննչական բաժնի ավագ քննիչի որոշումը վերացնել, իսկ ՀՀ հատուկ քննչական ծառայությանը պարտավորեցնել վերացնելու սույն որոշմամբ արձանագրված Ռ.Նիսիզյանի իրավունքների և ազատությունների խախտումները:

Միևնույն ժամանակ, Ժ.Բաղումյանի կյանքի իրավունքի արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նկատառումներից ելնելով, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նաև նախանշել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ էր իրականացնել Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ հարուցվելիք քրեական գործի շրջանակներում արդյունավետ քրեադատավարական քննություն իրականացնելու համար: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ քրեական գործի շրջանակներում անհրաժեշտ է, ի թիվս այլ հարցերի՝

ա) պատշաճ արձագանքման արժանացնել ամուսնու նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման և դրա արդյունքում նրա կյանքի իրավունքի խախտման վերաբերյալ Ռ.Նիսիզյանի փաստարկները: Իրավասու մարմինը պարտավոր է քայլեր ձեռնարկել հանցագործության մասին հաղորդման մեջ արված այնպիսի հայտարարությունների ստուգման ուղղությամբ, ինչպիսիք են քրեակատարողական հիմնարկի բուժմասում արհեստավարժ և պատշաճ բուժօգնություն ցուցաբերելու համար նվազագույն պայմանների բացակայությունը, հիվանդին՝ համապատասխան

հետազոտություններ անցնելու և հետագա բուժումը կազմակերպելու նպատակով ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ չտեղափոխելը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այն հանգամանքը, որ մահվանը նախորդող ժամանակահատվածում Ժ.Բաղումյանը գտնվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի բուժանձնակազմի հսկողության ներքո, դեռևս չի վկայում պատշաճ և արդյունավետ մասնագիտական բժշկական օգնություն ստանալու մասին: Բացի այդ, բուժման արդյունավետության մասին չի վկայում նաև քննիչի այն դիտարկումը, որ ՔԿՀ-ում աշխատում է ոչ թե մեկ բուժակ, այլ քսանմեկ բուժաշխատող:

բ) Քայլեր ձեռնարկել պարզելու՝

- արդյո՞ք ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի բժշկական մասում կան բավարար պայմաններ նման հիվանդություններով տառապող անձին անհրաժեշտ բուժօգնություն ցուցաբերելու համար,

- առկա՞ է արդյոք համապատասխան մասնագիտացում ունեցող բուժանձնակազմ,

- առկա՞ են արդյոք կանոնավոր հետազոտություններ իրականացնելու պայմաններ, անհրաժեշտ սարքավորումներ, համապատասխան դեղորայք:

գ) Հարցաքննել Ժ.Բաղումյանի բուժումն իրականացրած ՔԿՀ-ի բժշկական անձնակազմին և այլ անձանց՝ պարզելու, թե ի՞նչ հետազոտություններ են կատարվել և ինչպիսի՞ն են եղել դրանց արդյունքները, ի՞նչ բուժում է ստացել հիվանդը, ի՞նչ ընթացք (դինամիկա) է ունեցել նրա հիվանդությունը քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում: Ընդ որում, էական են ցուցաբերվող բուժօգնության արդյունքները. որքանո՞վ են դրանք արդյունավետ եղել, արդյո՞ք ձեռնարկված միջոցները կարգավորել են անձի առողջական վիճակը:

դ) Միջոցներ ձեռնարկել պարզելու, թե ինքնազգացողության կտրուկ վատթարացման պայմաններում ինչո՞ւ Ժ.Բաղումյանը հիվանդանոց կամ այլ մասնագիտացված հաստատություն չի տեղափոխվել, և արդյունավետ են եղել արդյոք անձի վիճակը կայունացնելու համար ՔԿՀ-ում ձեռնարկված միջոցառումները:

Կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող քրեադատավարական քննության արդյունավետության՝ Ռ.Նիսիյանի գործով որոշմամբ արձանագրված չափանիշներից երեքին Վճռաբեկ դատարանն ավելի մանրամասն անդրադարձել է Աշոտ Մալխասյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵԱՔԴ/0051/11/14 որոշման մեջ:

Այսպես, Ա.Մալխասյանի գործով փաստերի՝ համաձայն՝ ժամկետային զինծառայող Ա.Մալխասյանը տառապել է մի շարք հիվանդություններով: Մինչդեռ Ա.Մալխասյանը, հետազոտվելով Արաբկիրի զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովում, էրեբունի բժշկական կենտրոնում, այնուհետև նաև Կենտրոնական ռազմական բժշկական հանձնաժողովում, զինծառայության համար ճանաչվել է պիտանի, 2009 թվականի հունիսի 26-ին զորակոչվել է ՀՀ զինված ուժեր և ծառայության ուղարկվել ԼՂՀ պաշտպանության բանակի թիվ 25918 զորամաս՝ որպես ժամկետային զինծառայող,

կոչումը՝ շարքային: Այնուհետև, 2009 թվականի հուլիսի 4-ին՝ ժամը 13:55-ի սահմաններում շարքային Ա.Մալխասյանը զորամասի տարածքում իրեն վատ է զգացել, կորցրել գիտակցությունը, որի պատճառով տեղափոխվել է Մեխակավանի զինվորական հոսպիտալ, որտեղ նրա մոտ ախտորոշվել է կլինիկական մահ: 2009 թվականի հուլիսի 5-ին՝ ժամը 20:25-ին, գրանցվել է նրա կենսաբանական մահը:

Ա.Մալխասյանի մահվան կապակցությամբ 2009 թվականի հուլիսի 4-ին հարուցվել է քրեական գործ: 2014 թվականի հուլիսի 17-ին քննիչը որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին, որով արձանագրել է, որ Արեգ Մալխասյանը կենդանության օրոք տառապել էր «Պանկարդիտ, սրտամկանի ծանր դիստրոֆիանեկրոբիոտիկ օջախներով, կորոնարիտ, դիֆուզ կարդիոսկլերոզ, կիսալուսնաձև փականներիդեստրուկտիվ-դեգորգանիզացիոն փոփոխություններ, աորտայի կիսալուսնաձև փականների նույնանման փոփոխություններ» հիվանդություններով, որոնք ունեցել են ծածկընթաց ընթացք, և դրանք կարող էին նաև արտահայտված գանգատներ չառաջացնել, նրա մոտ լինել կարծեցյալ բավարար վիճակ, սակայն հետագայում կենսակերպի, կենցաղի կտրուկ փոփոխություններով պայմանավորված՝ բերել են ծածկընթաց ախտաբանական փոփոխությունների սրացմանը՝ առաջացնելով վիճակի կտրուկ վատացում, սրտի կանգ, որոնք չեն հայտնաբերվել և չէին կարող հայտնաբերվել անգամ զորակոչվելուց առաջ ՀՀ ԱՆ ախտորոշիչ կենտրոնում և այլ կլինիկաներում կատարված հետազոտությունների ժամանակ կամ հետագայում զորակոչի ժամանակ նրա առողջական վիճակը հետազոտած և ուսումնասիրած համապատասխան բժիշկ-մասնագետների կողմից: Արդյունքում քննիչը եզրահանգել է, որ բժիշկների՝ որպես պաշտոնատար անձ հանդես գալու և իրենց կողմից ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անփույթ և անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելու հետևանքով չի եղել պայմանավորված Ա.Մալխասյանի մահը, այլ այն ունեցել է ծածկընթաց ընթացք:

Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, գնահատման է ենթարկել, թե արդյոք Ա.Մալխասյանի մահվան կապակցությամբ իրականացված քննությունը համապատասխանում է քրեադատավարական քննության արդյունավետության ներքոհիշյալ չափանիշներին:

ա) իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ,

բ) քննության արդյունքում պետք է հստակեցվեն դեպքի հանգամանքները,

գ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներ ձեռք բերելու համար: Վարույթն իրականացնող մարմինները պետք է ձեռնպահ մնան շտապողական կամ թույլ պատճառաբանված հետևություններից, քանի որ քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում մահվան պատճառները պատասխանատու անձանց կողմից պարզելու կարողությունը, վտանգում է քննության արդյունավետությունը, հետևաբար և Կոնվենցիայի 2-րդ հոդվածով պետության ստանձնած պարտավորությունների իրագործումը:

Վճռաբեկ դատարանը հատկապես ընգծել է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումներն այն մասին, որ քննությունը պետք է լինի մանրամասն: Դա նշանակում է, որ մարմինները միշտ պետք է կատարեն լուրջ քայլեր, որպեսզի պարզեն՝ ինչ է տեղի ունեցել, և չպետք է հիմնվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված հետևությունների վրա, որպեսզի փակեն քննությունը կամ որպես իրենց որոշումների հիմք ընդունեն: Նրանք պետք է կատարեն իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլոց, ականատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները: Քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը (*ի թիվս այլոց, Gorelov v. Russia* գործով 2014 թվականի հունվարի 9-ի վճիռ, գանգատ թիվ 49072/11, կետ 52): Անհրաժեշտ է նաև բացառել հանցավոր համագործակցությունը կամ հանցավոր արարքների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելը (տես *Guleg v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 54/1997/838/1044, կետ 82):

Հաշվի առնելով, որ (ա) կետում նշված չափանիշի գնահատումը, մասնավորապես պատշաճ ջանասիրության առումով, պայմանավորված է հաջորդ երկու չափանիշների գնահատումից՝ Վճռաբեկ դատարանը նախ անդրադարձել է վերջիններիս վերլուծությանը:

Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քննիչն իր որոշման հիմքում դրել է Համալիր փորձաքննության եզրակացությամբ նշված այն հանգամանքը, որ Ա.Մալխասյանի հիվանդությունը կրել է ծածկընթաց բնույթ և դրա հիման վրա եզրահանգում կատարել, որ դրանք «չեն հայտնաբերվել և չէին կարող հայտնաբերվել» համապատասխան բժիշկ-մասնագետների կողմից: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը նկատել է, որ Համալիր փորձաքննության եզրակացության բովանդակությունից հետևում է, որ ծածկընթաց բնույթ են կրել միայն կորոնարոսկլերոզ, կարդիոսկլերոզ ախտաբանական հատկանիշները, ընդ որում նման եզրահանգումը հիմնավորվել է այն հանգամանքով, որ կենդանության օրոք Ա.Մալխասյանը երբևէ գանգատներ չի ներկայացրել: Նշված եզրահանգումից չի հետևում, որ անձի մոտ գանգատների բացակայությունը բացառում է բժիշկների կողմից համապատասխան հետազոտությունների և մեթոդիկաների կիրառման միջոցով վկայակոչված սրտային հիվանդությունները բացահայտելու փաստացի հնարավորությունը: Հետևաբար փորձագետների հանձնաժողովի կողմից օգտագործված «ծածկընթաց» հասկացությունը չի կարող մեկնաբանվել որպես «պատշաճ բժշկական հետազոտությունների միջոցով չբացահայտվող»: Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քննիչի եզրահանգումն այն մասին, որ Ա.Մալխասյանի սրտային հիվանդությունները չէին կարող հայտնաբերվել բժիշկ-մասնագետների կողմից, հիմնավորված չէ և չի համապատասխանում նաև նրա կողմից հիմք ընդունված համալիր փորձաքննության եզրակացության եզրահանգումներին:

Ավելին, թվով երկու՝ դատաբժշկական և դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննությունների եզրակացությունների առկայության պայմաններում համալիր հանձնաժողովային դատաբժշկական-ռազմաբժշկական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ քննիչի որոշումից պարզ չէր, թե ինչ տեսակի փորձաքննություն է նշանակվել՝ լրացուցիչ, թե՛ կրկնակի: Մինչդեռ փորձաքննության վերոնշյալ տեսակներն ինչպես նշանակման հիմքերի, նպատակի, այնպես էլ բովանդակության և իրականացման կարգի առումով էապես տարբերվում են (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդված): Այսինքն՝ չնայած քննիչը փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ հղում է կատարել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածին, սակայն չի տարբերակել նշանակվող փորձաքննության տեսակը: Ավելին՝ քննիչի որոշման մեջ բացակայում էր որևէ հիմնավորում այն մասին, թե որ բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության որ մեթոդիկաների միաժամանակյա կիրառման անհրաժեշտությունն է առկա փորձագետներին առաջադրված հարցերը պարզելու համար, որի պայմաններում քննարկվող որոշումը չի համապատասխանում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 246-րդ հոդվածի 7-ին մասի պահանջներին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ հանգամանքները կարող են էական կասկածներ հարուցել քննարկվող փորձաքննության և դրա արդյունքի օրինականության և արժանահավատության կապակցությամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածին առնչվող քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար քննիչի չհիմնավորված և գործի նյութերից չբխող պատճառաբանությունները, ինչպես նաև վերջինիս կողմից անհասկանալի տեսակի Համալիր փորձաքննության եզրակացության եզրահանգումները հիմք ընդունելը չեն կարող գնահատվել որպես «մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն ներկայացնելու» պետության պարտականության կատարում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմինները չեն պարզել և պատշաճ գնահատման չեն արժանացրել գործի նյութերում առկա և հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործում առկա են բազմաթիվ տվյալներ, համաձայն որոնց՝ Արեգ Մալխասյանն իր մոտ առկա հիվանդությունների հիմքով ենթակա չէր զորակոչման և պետք է ճանաչվեր զինվորական ծառայության համար ոչ պիտանի: Մինչդեռ այդ հիվանդությունները օբյեկտիվ և ամբողջական չեն բացահայտվել բժիշկների կողմից և (կամ) արտացոլվել Ա.Մալխասյանի առողջական վիճակի մասին ակտում: Դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության եզրակացության մեջ մանրակրկիտ և հստակ շարադրված են այն գործողությունները, որոնք «Էրեբունի» բժշկական կենտրոնի համապատասխան բժիշկները պարտավոր էին կատարել, սակայն չեն կատարել:

Արդյունքում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այս փաստական տվյալները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացել նախաքննության

մարմնի կողմից, այս ուղղությամբ օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն չի կատարվել: Մասնավորապես, քննիչի կողմից չի պարզվել, թե ինչու չեն կատարվել համապատասխան բժշկական հետազոտությունները և ինչու կատարված հետազոտությունների արդյունքներն օբյեկտիվ և ամբողջական չեն արտացոլվել Ա.Մալխասյանի առողջական վիճակի վերաբերյալ ակտում, ինչպես նաև համապատասխան իրավական գնահատական չի տրվել դրանց համար պատասխանատու բժշիկ-մասնագետների գործողություններին: Այդուհանդերձ, քննիչի կողմից կայացվել է քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում, որի օրինականությունը հաստատվել է ինչպես դատախազական հսկողության շրջանակներում, այնպես էլ ստորադաս դատարանների կողմից:

Բացի այդ, քննիչի կողմից լրիվ և բազմակողմանի քննություն չի իրականացվել և համապատասխան իրավական գնահատական չի տրվել Արաբկիրի զինկոմ Ա.Ուլիխանյանի գործողություններին: Մասնավորապես, Ա.Մալխասյանի հայրը՝ տուժողի իրավահաջորդը, ինչպես նաև եղբայրը ցուցմունք են տվել զինկոմ Ա.Ուլիխանյանի կողմից թույլ տրված օրինախախտումների և Արեգ Մալխասյանի նկատմամբ նրա՝ ընդգծված անբարյացակամ վերաբերմունքի մասին: Իհարկե, քննիչը իրավիճակ է որպես վկա հարցաքննել է Ա.Ուլիխանյանին, որը ցուցմունք է տվել, որ ինքն է կարգադրել Արեգ Մալխասյանի անձնական գործից հանել թվով տասը փաստաթուղթ և կցել զինկոմի սարիատի գործավարության կարգագրերին: Մինչդեռ քննիչը չի պարզել, թե ինչ նպատակով է Ա.Ուլիխանյանը կարգադրել զորակոչիկ Արեգ Մալխասյանի անձնական գործից փաստաթղթեր հանել, այն էլ այնպիսիք, որոնք որոշիչ նշանակություն կարող էին ունենալ նրա՝ զինձառայության համար պիտանի լինելու հարցը որոշելիս: Բացի այդ, քննիչը չի պարզել՝ արդյոք Ա.Ուլիխանյանն իրավասու էր այդպիսի կարգադրություն անել, եթե այո՝ որ իրավական ակտի հիման վրա: Քննիչը չի պարզել նաև՝ արդյոք Արաբկիրի զինվորական կոմիսարն իր կողմից ուղարկված անձի միջոցով միջամտել է «Էրեբունի» բժշկական կենտրոնի կամ որևէ այլ բժշկական հաստատության բժիշկների մասնագիտական գործունեությանը, կամ օժտված է արդյոք նրանց աշխատանքը վերահսկելու լիազորությամբ:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ քննիչի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, հետևաբար և դատախազական հսկողության և դատական վերահսկողության շրջանակներում դրա կապակցությամբ կայացված որոշումները հիմնված են «թույլ պատճառաբանված» հետևությունների վրա: Իսկ քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում մահվան պատճառները պատասխանատու անձանց կողմից պարզելու կարողությունը, վտանգում է քննության արդյունավետությունը, հետևաբար և Կոնվենցիայի 2-րդ հոդվածով պետության ստանձնած պարտավորությունների իրագործումը:

Անդրադառնալով իրավասու մարմինների կողմից **պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ գործելու** պարտականության չափանիշին՝ Վճռաբեկ դատարանը Ա.Մալխասյանի գործով որոշմամբ արձանագրել է, որ 2009 թվականի հուլիսի 4-ին հարուցված քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացվել է 30 անգամ: Վերջին անգամ այն երկարացվել է 2014 թվականի մայիսի 31-ին՝ դատախազ Ա.Մ.Խաչատրյանի կողմից՝ մինչև 2014 թվականի օգոստոսի 4-ը: Ընդ որում, եթե նախաքննության սկզբնական շրջանում կատարվել են բազմաթիվ քննչական գործողություններ, ապա դրանից հետո կատարված քննչական գործողությունների քանակն ու որակը վկայում են քննության ընթացքն անհարկի ձգձգելու միտման մասին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի քննության շրջանակներում իրականացված վերջին փորձաքննության եզրակացությունը վարույթն իրականացնող մարմինը ստացել է դեռևս 2011 թվականի սեպտեմբերի 17-ին, իսկ գործի հարուցման պահից առ այդ ժամանակահատվածը քննիչի կողմից իրականացվել են մեծածավալ քննչական գործողություններ: Ինչ վերաբերում է 2011 թվականի հոկտեմբերից հետո ընկած ժամանակաշրջանին, ապա անհրաժեշտ է արձանագրել հետևյալը.

«2011 թվականի նոյեմբերի 1-ին քննիչ Ա.Խաչատրյանը որոշում է կայացրել նախաքննության ժամկետը ևս 2 ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին, պարճառաբանելով, որ անհրաժեշտ է հարցաքննել Համալիր փորձաքննությունը կատարած մի շարք փորձագետների, և որ առանց դրա՝ «հնարավոր չէ անդրադառնալ քրեական գործի հետագա և վերջնական ընթացքին (...), բացի այդ դեռևս պետք է կատարվեն մեծածավալ այլ դատավարական գործողություններ ևս, որոնց համար կպահանջվի որոշակի ժամանակ: Նույն օրը դատախազ Հ.Հարությունյանի կողմից նախաքննության ժամկետը երկարացվել է 2 ամսով՝ մինչև 2012 թվականի հունվարի 4-ը: Քրեական գործի նյութերից երևում է, որ այդ ժամանակահատվածի ընթացքում քննիչ Ա.Խաչատրյանը հարցաքննել է փորձագետներ Գագիկ Եգանյանին, Գագիկ Հակոբյանին և Զարեհ Տեր-Ավետիսյանին: Այդ հարցաքննությունները, որոնց արձանագրությունները գեներղված են յուրաքանչյուրը՝ 2-ական թերթի վրա, կատարվել են մեկ օրում՝ 2011 թվականի դեկտեմբերի 5-ին, իսկ որևէ այլ դատավարական գործողություն հիշյալ 2 ամսվա ընթացքում չի կատարվել:

2011 թվականի դեկտեմբերի 29-ին քննիչ Ա.Խաչատրյանը դարձյալ որոշում է կայացրել նախաքննության ժամկետը 2 ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին, պարճառաբանելով, որ անհրաժեշտ է հարցաքննել Համալիր փորձաքննությունը կատարած այլ փորձագետների ևս, ինչպես նաև 'էրեբունի' ԲԿ-ի զորակոչային հանձնաժողովի անդամներին և նույն ԲԿ-ի այլ բժիշկ-մասնագետների, և որ առանց դրա՝ «հնարավոր չէ անդրադառնալ քրեական գործի հետագա և վերջնական ընթացքին (...), բացի այդ դեռևս պետք է կատարվեն մեծածավալ այլ դատավարական գործողություններ ևս, որոնց համար կպահանջվի որոշակի ժամանակ: Նույն օրը դատախազ Հ.Հարությունյանի կողմից նախաքննության ժամկետը երկարացվել է 2 ամսով՝ մինչև

2012 թվականի մարտի 4-ը: Քրեական գործի նյութերից երևում է, որ այդ ժամկետի ընթացքում քննիչ Ա.Խաչատրյանը հարցաքննել է փորձագետներ Հակոբ Դավթյանին, Արմեն Վարդանյանին և Հակոբ Հովսեփյանին: Այդ հարցաքննությունները կատարվել են մեկ օրում՝ 2012 թվականի հունվարի 13-ին, և բացի դրանցից, քննիչի վերոհիշյալ որոշման մեջ նշված որևէ այլ դատավարական գործողություն այդ 2 ամսվա ընթացքում չի կատարվել: 2012 թվականի փետրվարի 10-ին քննիչը ստացել է տուժողի իրավահաջորդ Աշոտ Մայիսայանի դիմումը, որով նա խնդրել է որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ ներգրավել փաստաբան Սեդա Սաֆարյանին: Նույն օրը քննիչ Ա.Խաչատրյանը որոշում է կայացրել փաստաբան Սեդա Սաֆարյանին տուժողի իրավահաջորդի օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին:

2012 թվականի մայիսի 2-ին քննիչ Ա.Խաչատրյանը որոշում է կայացրել նախաքննության ժամկետը ևս 2 ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին, դրա անհրաժեշտությունը պայմանավորելով տրամադրված գործի նյութերին տուժողի իրավահաջորդի օրինական ներկայացուցիչ Ա.Սաֆարյանի կողմից ծանոթանալու հանգամանքով, նաև՝ նյութերում դժվար ընթեռնելի փաստաթղթերի առկայությամբ պայմանավորված լրացուցիչ ժամանակի անհրաժեշտության մասին փաստաբանի դիմումի առկայությամբ: Քննիչի հիշյալ միջնորդությունը բավարարվել է դատախազի կողմից»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քրեական գործի քննության ընթացքի ուսումնասիրությունից հետևում է, որ վերը ներկայացված միտումները շարունակվել են նաև 2012 թվականի հուլիսից մինչև քրեական գործի վարույթը կարճելը՝ 2014 թվականի հուլիսի 17-ը: Այնուհետև ընդգծել է, որ քննարկվող ժամանակահատվածում քննիչն այդպես էլ չի կատարել իր նախկին միջնորդություններում հիշատակված «մեծածավալ այլ դատավարական գործողությունները»:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով կոպտորեն խախտվել են քննության ողջամիտ ժամկետները, որի արդյունքում իրականացված քննությունը չի համապատասխանում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով արդյունավետ քննության՝ պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ գործելու չափանիշին: Վերջինիս հետևանքով նաև կարող են խախտվել տուժողի իրավահաջորդի իրավունքները, մասնավորապես, իր որդու մահվան պատճառների և հանգամանքների մասին համոզիչ բացատրություն ստանալու, ինչպես նաև մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջի իրավունքները:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա է դարձրել գործի ողջամիտ ժամկետների պահպանման խնդիրը՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակներում: Վերջինս միտված է բացառելու հանցավոր համագործակցությունը կամ հանցավոր արարքների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելը՝ մտքում ունենալով նաև քննության ողջամիտ ժամկետների միտումնավոր ձգձգման արդյունքում հանցագործության վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով մեղավոր անձանց քրեական պատասխանատվությունից խուսափելու վտանգը: Վերջինս

անթույլատրելի է հատկապես Կոնվենցիայի 2-րդ հոդվածին առնչվող գործերով և լուրջ վտանգ է պարունակում դրանով երաշխավորված կյանքի հիմնարար իրավունքը վերացական և պատրանքային դարձնելու տեսանկյունից:

Հիմք ընդունելով հիշատակված չափանիշների՝ ներպետական իրավապահ պրակտիկայում իմպլեմենտացման գործընթացի շարունակականությունը և անընդհատությունը, Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային հանձնառությունների անշեղ կատարման կարևորությունը և ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազին, կայազորների զինվորական դատախազներին՝

Ի թիվս այլնի՝ ապահովել զինված ուժերում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության հետևյալ չափանիշները.

1) Զինճառայողների մահվան դեպքերով հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում ապահովել քրեադատավարական անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկումը մահվան պատճառի վերաբերյալ հնարավոր բոլոր վարկածներն առաջ քաշելու, արագ և զուգահեռ ստուգելու ուղղությամբ,

2) Քննությունը սկսելուց անմիջապես հետո ձեռնարկել միջոցներ դեպքին ականատես կամ դեպքի վերաբերյալ տեղեկությունների տիրապետող վկաների շփումը միմյանց հետ բացատրելու կամ նվազագույնի հասցնելու ուղղությամբ և այդ ընթացքում հնարավորինս արագ կազմակերպել վկաների հարցաքննությունը՝ նրանց առաջադրելով առաջ քաշված բոլոր վարկածների ստուգմանն ուղղված հարցեր,

3) Յուրաքանչյուր դեպքում քննարկել դեպքի վերաբերյալ առավել կարևոր տեղեկությունների տիրապետող զինճառայող վկաների նկատմամբ համաճառայակիցների կողմից հնարավոր ճշումներ գործադրելու հնարավորությունը, այդ մասին վկայող տվյալների կամ վտանգի առկայության դեպքում կիրառել պաշտպանության միջոց՝ փոխելով զինճառայողի ծառայության վայրը: Միաժամանակ անհրաժեշտ է ապահովել, որպեսզի վկաները, որոնց ծառայության վայրը փոխվել է պաշտպանության միջոց կիրառելու արդյունքում, քննության նպատակներից ելնելով չենթարկվեն օրենքով չնախատեսված սահմանափակումների, ինչպես նաև բացառվի այդ նպատակներով զինվորական կանոնագրքերով նախատեսված սահմանափակումների կիրառումը /արձակումից զրկում, արձակուրդի տրման հետաձգում և այլն/,

4) Առարկայական քննություն կատարել մահացած զինճառայողների փորձաքննությամբ հայտնաբերված բոլոր վնասվածքների՝ անկախ մահվան հետ

ունեցած պատճառական կապից, առաջացման վաղեմությունն ու հանգամանքները պարզելու ուղղությամբ, մանրամասնորեն ստուգել այդ կապակցությամբ ստացված բոլոր, այդ թվում՝ տուժողի իրավահաջորդի կողմից ներկայացված տեղեկությունները,

5) Դեպքի վայրի զննությունը կատարել դատական բժշկի, իսկ անհնարինության դեպքում՝ բժիշկ-մասնագետի մասնակցությամբ, կախված հետազոտման ենթակա իրադրության ու օբյեկտների բնույթից՝ դրան մասնակից դարձնել նաև այլ մասնագետների՝ գործի համար նշանակություն ունեցող բոլոր հետքերն ու օբյեկտները պատշաճ կարգով արձանագրելու և վերցնելու համար,

6) Բացառել ապացույցների հավաքման գործընթացում քրեական դատավարության օրենսգրքով չնախատեսված գործողությունների կատարմամբ ապացուցողական նշանակություն ունեցող օբյեկտների հետազոտման ու տվյալների արձանագրման արատավոր գործելակերպը,

7) Տուցաբերել հետևողականություն, որպեսզի դատաբժիշկ-փորձագետների կողմից փորձագետի եզրակացությամբ և հարցաքննությունների ժամանակ սպառիչ ու հիմնավոր պատասխաններ տրվեն վերը նշված հարցերի պարզման կապակցությամբ առաջադրված հարցերին, իսկ տարբեր փորձագետների /մասնագետների/ կողմից հակասական տվյալներ ներկայացվելու դեպքում կատարել քննություն հակասությունների պարզաբանման կապակցությամբ՝ ապահովելով քննության առարկա հանգամանքի վերաբերյալ պատճառաբանված հետևությունների հանգելու հնարավորություն,

8) Քննության առարկա դարձնել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից քրեական գործով պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ ստացված, մինչ այդ պահը քննությանն անհայտ կամ ձեռք բերված տվյալներին հակասող տվյալները, անհրաժեշտության դեպքում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքին համապատասխան ստուգել այդ տեղեկությունների հիմքերը,

9) Ապահովել, որպեսզի վնասվածքների առաջացման բոլոր վայրերը ենթարկվեն զննության՝ այդ քննչական գործողության նպատակներին համապատասխան օբյեկտներ, հետքեր ու հատկանիշներ հայտնաբերելու և ամրագրելու նպատակով,

10) Ձինձառայողներին իրենց ծառայության վայրից դուրս հարցաքննելիս ապահովել զինձառայողներին հարցաքննության կանչելու կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների պահպանումը, այդ կապակցությամբ պատշաճ կերպով կազմված փաստաթղթերը կցել քրեական գործի նյութերին,

11) Բացառել ձերբակալման կամ խափանման միջոցի կիրառման հիմքերի առկայության պայմաններում անձանց մասնակցությունը գործով վարույթին որպես վկա:

12) Այն դեպքերում, երբ մինչդատական վարույթում քրեական գործերի քննության ընթացքում ստացվի տվյալ գործին առնչվող, վատ վերաբերմունքի կամ խոշտանգման փաստով քննվող քրեական գործով կայացված վերջնական որոշումը կամ դատավճիռը, որով կհաստատվի այս կամ այն ապացույցի՝ այդպիսի վերաբերմունքի

արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը, ապահովել, որպեսզի ապացույցն անթույլատրելի համարելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի դիրքորոշումը հստակ կերպով արձանագրվի համապատասխան դատավարական փաստաթղթերում, իսկ դատարանում գործերի քննության ժամանակ արտահայտել նույնպիսի դիրքորոշում:

13) Միջոցներ ձեռնարկել հնարավորինս սեղմ ժամկետում անձին տուժողի իրավահաջորդ ճանաչելու և այդ կարգավիճակով նրան գործով վարույթին մասնակից դարձնելու համապատասխան դատավարական որոշում կայացնելու ուղղությամբ: Հնարավորինս բացառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասում առկա «քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս» ձևակերպման խիստ ֆորմալ մեկնաբանումը:

14) Տուժողի իրավահաջորդների կողմից ցանկություն արտահայտելու յուրաքանչյուր դեպքում, հնարավորության սահմաններում, կազմակերպել տուժողի իրավահաջորդների ընդունելություն հսկող դատախազի մոտ, նախաքննության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ՝ հնարավորինս սպառնալից պարզաբանումներ տրամադրել վերջիններիս մտահոգող հարցերի կապակցությամբ:

15) Ցուցաբերել հետևողականություն, որպեսզի նախաքննության ժամկետները երկարացնելու միջնորդություններում հստակ ներկայացվեն բոլոր այն գործողությունները, որոնք նախատեսվում է կատարել տվյալ ժամանակահատվածում, քննիչի կողմից պատշաճ ջանասիրություն չցուցաբերելու և նշված գործողությունները չկատարելու դեպքում քննարկել վերջինիս վարույթից հեռացնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

16) Պարտադիր քննության առարկա դարձնել հրամանատարական կազմի կողմից իրենց պաշտոնեական լիազորությունները պատշաճ կատարելու հարցը:

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով, հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի դատախազներին

Ի թիվս այլնի՝ ապահովել քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության հետևյալ չափանիշները.

1) Ազատությունից զրկման վայրերում արձանագրված մահվան յուրաքանչյուր դեպքի հանգամանքները քննության առարկա դարձնել հարուցված քրեական գործի շրջանակներում,

2) Ապահովել, որպեսզի ազատությունից զրկման վայրի վարչակազմի կողմից մահվան դեպք հայտնաբերելուց հետո դեպքի վայրը մեկուսացվի, և բացառվի կողմնակի անձանց մուտքը: Այդ նպատակով, խցերում մահվան դեպք հայտնաբերելու

յուրաքանչյուր դեպքում, պարտադիր քննարկման առարկա դարձնել խցերում պահվող անձանց ժամանակավորապես, մինչև անհրաժեշտ դատավարական գործողությունների կատարումը, այլ խցեր տեղափոխելու հարցը:

3) Քննությունը սկսելուց անմիջապես հետո ձեռնարկել միջոցներ դեպքին ակնատես կամ դեպքի վերաբերյալ տեղեկությունների տիրապետող վկաների շփումը միմյանց հետ բացառելու կամ նվազագույնի հասցնելու ուղղությամբ և այդ ընթացքում հնարավորինս արագ կազմակերպել վկաների հարցաքննությունը՝ նրանց առաջադրելով առաջ քաշված բոլոր վարկածների ստուգմանն ուղղված հարցեր: Այդ նպատակով՝ ազատությունից զրկման վայրի վարչակազմի ղեկավարին առաջարկել քննարկել նման անձանց տարբեր խցերում տեղաբաշխելու հարցը:

4) Բռնի մահվան յուրաքանչյուր դեպքով պարտադիր քննության առարկա դարձնել դեպքին քրեական ենթամշակույթ կրող անձանց հնարավոր ներգրավվածության հարցը, այդ նպատակով իրականացնել բազմակողմանի քննություն:

5) Ազատությունից զրկման վայրերում պահվող անձանց մահվան յուրաքանչյուր դեպքում անհապաղ՝ առանց ավելորդ ձգձգումների, տեղյակ պահել վերջինիս հարազատներին, հնարավորինս սեղմ ժամկետում որոշում կայացնել տուժողի իրավահաջորդ ճանաչելու և այդ կարգավիճակով գործով վարույթին մասնակից դարձնելու վերաբերյալ: Հնարավորինս բացառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասում առկա «քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս» ձևակերպման խիստ ֆորմալ մեկնաբանումը:

6) Բռնի մահվան յուրաքանչյուր դեպքով՝ դեպքի վայրի զննությունը կատարել դատական բժշկի, իսկ անհնարինության դեպքում՝ բժիշկ-մասնագետի մասնակցությամբ, կախված հետազոտման ենթակա իրադրության ու օբյեկտների բնույթից՝ դրան մասնակից դարձնել նաև այլ մասնագետների՝ գործի համար նշանակություն ունեցող բոլոր հետքերն ու օբյեկտները պատշաճ կարգով արձանագրելու և վերցնելու համար: Ապահովել դեպքի վայրի զննության արձանագրությանը կից՝ գունավոր լուսանկարչական հավելվածի առկայությունը:

7) Ցուցաբերել հետևողականություն, որպեսզի դատաբժիշկ-փորձագետների կողմից փորձագետի եզրակացությամբ և հարցաքննությունների ժամանակ սպառիչ ու հիմնավոր պատասխաններ տրվեն վերը նշված հարցերի պարզման կապակցությամբ առաջադրված հարցերին, իսկ տարբեր փորձագետների /մասնագետների/ կողմից հակասական տվյալներ ներկայացվելու դեպքում կատարել քննություն հակասությունների պարզաբանման կապակցությամբ՝ ապահովելով քննության առարկա հանգամանքի վերաբերյալ պատճառաբանված հետևությունների հանգելու հնարավորություն,

8) Ազատությունից զրկված անձի սպանության կամ ինքնասպանության յուրաքանչյուր դեպքով՝ պարտադիր մանրամասն քննության առարկա դարձնել ազատությունից զրկման վայրի վարչակազմի գործողությունները՝ մահացածի կյանքին

սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայությունը պարզելու և այն կանխելու նպատակով վերջինիս գործողությունների շրջանակը պարզելու ուղղությամբ:

9) Անհապաղ միջոցներ ձեռնարկել մահացածի վերաբերյալ ազատությունից զրկման վայրում գտնվող փաստաթղթերը և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այլ պարագաները (անձնական իրեր, հիվանդության պատմագրերը, իրականացված հետազոտությունների արդյունքները, բժշկական միջամտության առարկաները և այլն) առգրավելու ուղղությամբ:

10) Եթե ազատությունից զրկման վայրում մահվան դեպքի հանգամանքներ քննվում են ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական գործի շրջանակներում, քննության առարկա դարձնել ազատությունից զրկման վայրի բուժմասում արհեստավարժ և պատշաճ բուժօգնություն ցուցաբերելու համար նվազագույն պայմանների բացակայության, հիվանդին՝ համապատասխան հետազոտություններ անցնելու և հետագա բուժումը կազմակերպելու նպատակով մասնագիտացված բժշկական հաստատություն չտեղափոխելու հանգամանքները: Բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելու միջոցով պարզել, թե արդյոք ազատությունից զրկման վայրի բժշկական մասում կան բավարար պայմաններ նման հիվանդություններով տառապող անձին անհրաժեշտ բուժօգնություն ցուցաբերելու համար, առկա են արդյոք համապատասխան մասնագիտացում ունեցող բուժանձնակազմ, առկա են արդյոք կանոնավոր հետազոտություններ իրականացնելու պայմաններ, անհրաժեշտ սարքավորումներ, համապատասխան դեղորայք: Անհրաժեշտ է հարցաքննել նաև մահացած անձի բուժումն իրականացրած բժշկական անձնակազմին և այլ անձանց՝ պարզելու, թե ի՞նչ հետազոտություններ են կատարվել և ինչպիսին են եղել դրանց արդյունքները, ինչ բուժում է ստացել հիվանդը, ինչ ընթացք (դինամիկա) է ունեցել նրա հիվանդությունը քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում: Ընդ որում, էական են ցուցաբերվող բուժօգնության արդյունքները. որքանով են դրանք արդյունավետ եղել, արդյոք ձեռնարկված միջոցները կարգավորել են անձի առողջական վիճակը:


11) Տուժողի իրավահաջորդների կողմից ցանկություն արտահայտելու յուրաքանչյուր դեպքում, հնարավորության սահմաններում, կազմակերպել տուժողի իրավահաջորդների ընդունելություն հսկող դատախազի մոտ, նախաքննության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ՝ հնարավորինս սպառիչ պարզաբանումներ տրամադրել վերջիններիս մտահոգող հարցերի կապակցությամբ:

12) Ցուցաբերել հետևողականություն, որպեսզի նախաքննության ժամկետները երկարացնելու միջնորդություններում հստակ ներկայացվեն բոլոր այն գործողությունները, որոնք նախատեսվում է կատարել տվյալ ժամանակահատվածում, քննիչի կողմից պատշաճ ջանասիրություն չցուցաբերելու և նշված գործողությունները չկատարելու դեպքում քննարկել վերջինիս վարույթից հեռացնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

3. ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գ. Աբրահամյանին

1) ՀՀ գլխավոր դատախազին զեկուցելուց հետո, նախաքննության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ, ապահովել զինված ուժերում և ազատությունից զրկման վայրերում գրանցված և հանրային մեծ հնչեղություն ունեցող մահվան դեպքերով իրականացվող քննության ընթացքի վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար հրապարակումը ՀՀ դատախազության պաշտոնական կայքէջում:

Ա.ԴԱՎԹՅԱՆ



A handwritten signature in black ink, appearing to read 'A. Davtyan', is written over a horizontal line.